ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ

—

Բագուի Հայ Աւետարանական Լութերական համայնքը, միացած համայն ազգի հետ, բուռն ուրախութեամբ տօնում է հայոց տառերի գիւտի և հայերէն գրքի տպագրութեան պատմական խոշոր տօնը։

Սուրբ Մեսրոպ, ստեղծելով հայ գիրը, կատարեց մի մեծ գործ, որի նպատակն էր՝ Սուրբ Գրքի իմաստին հաւատաստեան՝ ազատել հայ ազգի մտաւոր կեանքը օտար ազդեցութիւնից և ստեղծել հայի համար մի ինքնուրոյն ազգային կեանք՝ զօրացած Աւետարանի փրկարար լուսով։

Սահակ և Մեսրոպ, թարգմանելով Աստուածաշունչը մայրենի լեզուով, ուզեցին հայ ազգի համար Սուրբ Գիրքն էլ այնպէս քաղցր ու սիրելի դարձնել, ինչպէս իրան մայրենի լեզուն։

Իսկ այն օրից, երբ մամուլի տակից դուրս եկաւ առաջին հայերէն գիրքը, հայ ազգն էլ մտաւ քաղաքակրթված ազգերի թւի մէջ։

Բագուի Հայ Աւետարանական Լութերական համայնքը իր լուսաւորչական և բոլոր միւս այլադաւան հայ եղբայրների հետ բերում է իր բարեմաղթութիւնները և խընդրում Աստուծոյ օգնութիւնը, որպէսզի հայ գիրը միշտ կանգուն մնայ իր կոչման բարձրութեան վրա և ոչ միայն լուսաւորէ ու կրթէ հայ ազգի միտքն և նրան կենցաղակիրթ ազգերի շարքը դասէ, այլ Սուրբ Մեսրոպի բաղձանաց համաձայն՝ Աստուծոյ խօսքի պայծառ լուսով նրա սիրտն ու հոգին էլ լուսաւորէ ու ջերմացնէ, որպէսզի բոլոր դաւանութեան հայերը՝ ներշնչված Սուրբ Գրքի վեհ գաղափարներով և կապված քրիստոնէական սիրոյ սերտ կապով՝ կարողանան գործել միասին Աստուծոյ փառքի և հայ ազգի բարօրութեան համար։